ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

25.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/95

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11727-18 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.06.2018թ. թիվ ԴՎԱ/2260 գրության հիման վրա, 27.06.2018թ. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.06.2018թ. թիվ ԴՎԱ/2260 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 5 մասնակից, այդ թվում՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով՝ այդ թվում նաև 104-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կոմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին մի շարք անհամապատասխանություններ, իսկ 104-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիր ներկայացված չէր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցն մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի առաջարկին ի պատասխան՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով ներկայացվեցին շտկված փաստաթղթերը, որոնց քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ դրանցում կրկին բացակայում է 104-րդ չափաբաժնի մասով պահանջված հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)

48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշել է 104-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 04.07.2018թ. թիվ 040718 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Մեր ընկերությունը տաս տարուց ավելի իր աշխատանքային գործունեությունն է ծավալում բժշկական սարքավորումների և քիմիական նյութերի մատակարարման ոլորտում.

Երբևէ ներգրավված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

Հայտարարված ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով մրցույթի 115 չափաբաժիններից մասնակցել է 76-ին, իսկ ինչ վերաբերում է թիվ 104-րդ չափաբաժնի մասով առաջացած հարցին, այդ կետի հետ մեկտեղ Ընկերությունը ունեցել է շտկման ենթակա այլ չափաբաժիններ (թվով 6), որոնց մեջ առկա էին նմանատիպության հետ կապված անհամապատասխանություններ, որոնք օրենքով սահմանված ժամկետում շտկվել, համապատասխանեցվել են մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և ուղարկվել Պատվիրատուին:

Իսկ 104-րդ չափաբաժինն ամբողջությամբ համապատասխանել է հրավերի տեխնիկական բնութագրի պահանջին, առանց համարժեք կամ նմանատիպ լինելու հանգամանքի, այդ իսկ պատճառով տեխնիկական բնութագիրը ուղարկվել է առանձին:

Հայտնում ենք որ, այդ նույն չափաբաժինը ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել ենք դեռևս 2014թ. ի վեր, ընդ որում, նույն տեխնիկական բնութագրով ինչը որ եղել է Պատվիատուի պահանջը այս մրցույթի շրջանակներում ևս, որով և ընդունող հանձնաժողովը և պատասխանատու ստորաբաժանումը տարիներ շարունակ ընդունել է այդ ապրանքը և ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

Կցանկանանք նշել, որ 104-րդ չափաբաժնի մասով չկա այլ մասնակից և այդ չափաբաժնի ընդհանուր արժեքը կազմում է 305,000 (երեք հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

ՀՀ Պաշտպանության նախարարության և այլ պատվիրատուների հետ Ընկերությունը աշխատում է երկար տարիներ, և չենք ցանկանա անհարմարություն ստեղծել որևէ պատվիրատուի համար, ինչպես նաև խոցել կազմակերպության հեղինակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մեր ընկերությանը չներառել»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Անգին Սողոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 27.06.2018թ. թիվ 03/26-3/11727-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.06.2018թ. թիվ ԴՎԱ/2260 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 07.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5, 31.05.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 6 և 07.06.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունները, Պատվիրատուի կողմից 31.05.2018թ. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին ուղղված

ծանուցումը, «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 04.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:
- N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 07.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 8-11-րդ, 15-րդ, 16-րդ, 20-23-րդ, 26-րդ, 27-րդ, 29-48-րդ, 52-58-րդ, 61-րդ, 84-րդ, 85-րդ, 91-97-րդ, 101-րդ, 102-րդ, 104-115-րդ,

չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 18.05.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն ծանուցվել է:

Հանձնաժողովը 31.05..2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ:

Մասնավորապես.

- Հրավերի 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հստակ սահմանված էր, որ նշված ապրանքատեսակների փաթեթավորումը պետք է լինի պլաստիկե պարկերով, սակայն մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է Հրավերով սահմանված պահանջը,

- 11-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշված է «բետտա-ճառագայթներով ստերիլիզացիայի սերտիֆիկացում», այնինչ Հրավերով սահմանված է, որ պետք է լինի «գամմա- ճառագայթներով ստերիլիզացիայի սերտիֆիկացում»,

- 91-րդ, 92-րդ և 93-րդ չափաբաժինների մասով հստակ նշված է թեստերի քանակ, սակայն «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում թեստերի առաջարկվող քանակների հետ օգտագործվել է «մոտ» արտահայտությունը,

- 104-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կոմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 18.05.2018թ. պատշաճ ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված

որակավորման փաստաթղթերը, սակայն նշված չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիր չի ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 07.06.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով որպես շտկում ներկայացրած փաստաթղթերում բացակայում էր 104-րդ չափաբաժնի մասով պահանջված Հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց 104-րդ չափաբաժնի մասով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ թիվ 104-րդ չափաբաժնի հետ մեկտեղ Ընկերությունը ունեցել է նաև շտկման ենթակա այլ չափաբաժիններ, որոնք օրենքով սահմանված ժամկետում շտկվել և ուղարկվել են Պատվիրատուին, իսկ 104-րդ չափաբաժինն ամբողջությամբ համապատասխանել է Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջին, և այդ իսկ պատճառով տվյալ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ուղարկվել է առանձին: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև որ, այդ նույն չափաբաժինը ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարվում է դեռևս 2014թ. ի վեր, նույն տեխնիկական բնութագրով:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը՝ Բողոքներ քննող անձին ներկայացրեց Պատվիրատուին՝ 01.06.2018թ. a.maghaqyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղարկված նամակների կարճապատկերումները (screenshot):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված

ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը

և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 01.06.2018թ. էլեկտրոնային փոստով ուղարկել է Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ Հրավերում նշված a.maghaqyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պարտավորությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11727-18 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ